«Հաստատում եմ»

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական

համալսարանի ռեկտոր Է. Սերոբյան

«13» մայիսի 2024թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Գագիկ Սեդրակի Ավետիսյանի «Սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորումը պատմամշակութային կոթողների պատկերազրման գործընթացում» վերնագրով ԺԳ.00.02 թվանիշով, «Դասավանման և ուսուցման մեթոդիկա (կերպարվեստ)» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին:

Գագիկ Սեդրակի Ավետիսյանի «Սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորումը պատմամշակութային կոթողների պատկերազրման գործընթացում» թեկնածուական ատենախոսության արդիականությունը հիմնավորված է, որը պայմանավորված է արդի ժամանակներում գեղարվեստական կրթության դերի արժևորման, ազգային մշակութային ժառանգությունը ճանաչելու, պահպանելու, ազգային արժեհամակարգի ձևավորման, ինչպես նաև սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման գործընթացում մեթոդական համակարգի մշակման անհրաժեշտությամբ: Գնահատելի է, որ հիմնախնդիրը դիտարկվում է ինովացիոն միջոցների կիրառմամբ մանկավարժական համապատասխան պայմանների համալիր մոդելի մշակման համատեքստում:

Ձևակերպված է հիմնախնդիրը, սահմանված է նպատակը, առաջադրված են մի շարք խնդիրները, որոնք ամբողջական պատկերացում են տալիս կատարված հետազոտական աշխատանքի մասին: Ներածությունում ներկայացված են հետազոտական աշխատանքի բոլոր բաղադրիչները, դրանք փոխկապված և փոխպայմանավորված են::

Ատենախոսության առաջին՝ «Սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման գիտատեսական հիմքերը պատմամշակութային կոթողների

ուսումնասիրման համատեքստում» խորագրով գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Գեղարվեստական ընկալունակության ձևավորման տեսական հիմնավորումը պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում», համապարփակ լուսաբանված են սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման հիմքերն ու տեսական հիմնավորումները պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում, ներկայացված են այդ հարցին վերաբերող հայ և արտասահմանյան հեղինակների աշխատություններում տեղ գտած հիմնական մոտեցումներն ու մեկնաբանությունները:

Երկրորդ ենթագլխում, որը կրում է «Սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման կառուցվածքային առանձնահատկություններն արդի կրթական համակարգում» խորագիրը, ներկայացված են սովորողների գեղարվեստական ընկալունակության մակարդակները:, կատարված է սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման կառուցվածքային առանձնահատկությունների մոդելի վերլուծություն, առանձնացված են սովորողների գեղարվեստական ընկալունակության զարգացման համակարգի հիմնական կառուցվածքային բաղադրիչները՝ շեշտադրելով «Կերպարվեստ» և «Համակարգչային գրաֆիկա» դասընթացների նշանակությունն այդ գործընթացում:

Առաջին գլխի երրորդ ենթագլխում՝ «Պատմամշակութային կոթողների կազմության և պատկերագրման հիմնախնդիրն ուսուցման մեջ», անդրադարձ է արվել Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող հայկական նշանավոր հուշարձանների ճարտարապետական կազմությանն ու պատկերագրական հիմնախնդիրներին (Լեռնային Ղարաբաղի և Արևմտյան Հայաստանի կոթողների օրինակով), արված են հետաքրքիր նկարագրություններ, վերլուծություններ:

Ատենախոսության՝ «Սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման մեթոդական համակարգի փորձարարական հիմնավորումը պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում» խորագրով երկրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման մեթոդական համակարգի առանձնահատկությունները պատկերագրման գործընթացում», համադրելով սովորողների զգացմունքային ապրումակցումներն ու դրանց անդրադարձը պատկերագրման գործընթացում, ատենախոսը մշակել է սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման մեթոդական համակարգը, պատմամշակութային կոթողների պատկերագրման տեսակների խառը համակցված մոդելը: Ուշագրավ է պատմամշակութային կոթողների պատկերագրման առարկայական ծրագրերին առաջարկվող թեմատիկ մոդելը, որը ներկայացված է միայն «Կերպարվեստ» առարկայի շրջանակում: Արժեքավոր է յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ ներկայացված պատմական ակնարկներն ու վերլուծությունները:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում, որը կրում է «Պատմամշակութային կոթողների պատկերագրման ինովացիոն միջոցների կիրառումը, որպես սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման մանկավարժական պայման» խորագիրը, ներկայացված է ինովացիոն միջոցների կիրառմամբ սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման մանկավարժական պայմանների համալիր մոդելը: Այստեղ հեղինակն անդրադարձել է սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորմանը փոխլրացնող մանկավարժական գործոններին, դրանց նշանակությանն ու ազդեցությանը: Քննարկվում են նաև մանկավարժական պայմաններին դասավանդողների տիրապետման, ինչպես նաև ինովացիոն մասնագիտական տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները:

Երկրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ «Փորձարարական աշխատանքի նկարագիրն ու արդյունքների հավաստիությունը», ներկայացված են առաջադրված խնդիրների արդյունքները Վաղարշապատի Ս. Հռիփսիմե տաճարի օրինակով: Փորձարարական աշխատանքներում ուսումնասիրության օբյեկտ է ծառայել ընդհանուր առմամբ 211 սովորող:

Փորձարարական աշխատանքի և հետազոտությունների արդյունքների վերլուծությունները հաստատում և հիմնավորում են պատկերագրման միջոցով սովորողների գեղարվեստական ընկալունակության զարգացման մեթոդական համակարգի կիրառման կարևորությունն ու հուսալիությունը: Սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորմանը նպաստող

պատմամշակութային կոթողների պատկերագրման ավանդական եվ ինովացիոն միջոցների (գնահատման 10 բալային ցուցիչով) վերլուծության արդյունքները փաստում և հավաստում են, որ մասնագիտական ունակությունների հմտության շնորհիվ հնարավոր է առավել զարգացնել պատմամշակութային կոթողների պատկերագրման տեխնիկան, իհարկե, այդ գործընթացում կիրառելով ինովացիոն միջոցներ, թվային նորագույն տեխնոլոգիաներ:

Ատենախոսությունն ավարտվում է եզրակացություններով, որոնք կատարված ուսումնասիրությունների ամփոփումներն են, առաջադրված խնդիրների լուծումներն են:

Գագիկ Սեդրակի Ավետիսյանի «Սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորումը պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում» թեկնածուական ատենախոսությունն ունի գիտական արժեք, տրամաբանական կառուցվածք, հետազոտության արդյունքները կարող են կիրառություն ստանալ պրակտիկայում՝ համալրելով մանկավարժական գիտության այդ ոլորտը նոր մոտեցումներով, մեթոդներով, գործիքներով:

Աշխատանքի վերաբերյալ կան որոշ դիտարկումներ.

1. Աշխատանքում կարելի էր ներկայացնել «պատկերում», «պատկերագրում» հասկացությունների սահմանումները՝ հստակ տարանջատելով այն առաջադրանքները, որոնք համապատասխանում են այդ գործընթացներին. պատկերման առաջադրանքներ և պատկերագրման ինովացիոն միջոցների կիրառմամբ առաջադրանքներ:
2. Հետազոտողը որպես փորձարարական առաջադրանք ընտրել է Սբ. Հռիփսիմեի տաճարը պատկերման և պատկերագրման նպատակով: Կարծում ենք, որ այդ առաջադրանքը բավարար չէ հետազոտություն իրականացնելու համար:

Կարելի էր աղ. 1-ի առարկայական ծրագրում առաջարկված թեմատիկ մոդելի գործնական առաջադրանքները ևս ընդգրկել հավելվածում, քանի որ այդ առաջադրանքները կատարվել են փորձարարական շրջանում՝ կերպարվեստի դասերին:

3. Ամբողջ հետազոտությունն արված է միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների գեղարվեստական ընկալունակության վերաբերյալ: Կարծում ենք աշխատանքի բովանդակության մեջ, որևէ

ենթագլխում, մասնավորապես 1.2-ում, կարելի էր նշել, թե խոսքը ո՞ր սովորողների մասին է:

4. Կարծում ենք՝ աշխատանքում կարելի էր ներկայացնել նաև «Համակարգչային գրաֆիկա» առարկային վերաբերող դիտարկումներ:
5. Աշխատանքում կան եզրույթների և դրանց ներկայացման հետ կապված որոշ անհարթություններ (էջ 34):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս դիտարկումները չեն ստվերում սույն հետազոտության գիտական արժեքը: Ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանների շնորհման կարգի 7-րդ կետի պահանջներին և Գագիկ Սեդրակի Ավետիսյանը արժանի է իր հայցած ԺԳ.00.02-«Դասավանման և ուսուցման մեթոդիկա (կերպարվեստ)» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և ընունվել է 2024թ. մայիսի 13 «Մանկավարժության» ամբիոնի թիվ 13 նիստում:

Ամբիոնի նիստին արտահայտվել է մանկ. գիտ. թեկնածու Շ. Ալեքսանյանը: Նիստին մասնակցել են մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսորներ Ա. Մկոյանը, Ռ. Մարդոյանը, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտներ Լ. Ղուկասյանը, Մ. Կարապետյանը, Լ. Հակոբյանը, Ն. Ադամյանը, Լ. Միքաելյանը, Ն. Գրիգորյանը, Ա. Յայլոյանը, մանկ. գիտ. թեկնածուներ Մ. Ղալաչյանը, Ա. Զադոյանը:

Մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ,
Մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ Լ. Ղուկասյան

Մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ Լ. Ղուկասյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՇՊՀ-ի գիտքարտուղար՝ կենս. գիտ. թեկնածու, դոցենտ՝ Գ. Պետրոսյան